

ԱՄԱՆԻՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻ 25

19.07.1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՎԵՂ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

(Խմբագրական)

Տե՛ր Թաղիկ (Գիւղական կեանք) ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ, — Ընկերային հարցեր. «Արեւոյ
մանկութիւնը». ՏՈՒԹ. Տ. ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ՈՐԴԻ. — Ուսուցման դիւրացումը. ՏԻԳՐԱՆ ԶԱՅ,
ԵԱՆ, — Մայր Աթոռ. — Օրուան նօթիւր: — Միջազգային արձագանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերդի օտարական բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հաւսուց ղրգ.
Եւ գաւառներուն համար յիսուն ղրգ., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Յրանք կամ
5 բուլլի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ անօր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ-
մաններով:

Ձեռքի կ'ընդունուի ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزتي سي اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հայաթիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղաժիւր տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բուսկան դժուար է լու ընարութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր Եւրոպայի եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան Եւրոպայի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշուաւորի եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը գտնազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց մէջէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ ու մանուշակաւ, դուրիշ եւ զօրացուցիչ տեսակաւ զուգակէն ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքիցի քիլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի մէն առիթի ու կազմութեան, մէն կլիմայի եւ եղանակի եւ մէն ճաշակի:

Յալրուեան եւ Իսազուլեան քիլի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս առիթով մեծաքանակ ներածած է հարեւական զուտ թէյ մասնաւոր եւ շուկայան առփերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր տեսնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:
Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Զափլուի մեղա տեսակ թէյեր:

Ուսադուրքիւն մարգայի

2-10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւսաբան (gynécologue), Տօքթօր Էմիւրձէ որ 15 տարւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգոյ յաճախորդներուն թէ բնակութեան փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Իսկ վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ շահեւ նորագոյն մէթաաներով չղային եւ հոգեկան ու երեւակայական մէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ աղամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած չղային խռովումները եւ փրտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինիմալիքը, մորթնամալիքը եւայլն: Կիրակիներէն զառ մէն օր. կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ բարձր օրերը ձրեբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 2-10



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ Պարսկական Ինսպանատան խեղճ, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61
Զրահեան արաքման
Պալպալեան մէն օր ակոյսի մէն տեսակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գինիւրուան օր եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակադեմիքը: Յորեկները ակոյսայ քաշել տալու համար օրօշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ տառապողները Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղֆաճեւրուճ ճրի 2-10

CAISSE PATERNELLE

ՔԵՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԻ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապաւովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՏԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՆՈՒԽ ԵՒ ՊԱՀՆՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74%, որով ՔԵՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանգիստնայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Թրանսայի մէջէն նշանուար դաւաժտեղծներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Թրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏՐ ՅԼԻՌ, Դաւանագրանդիք ընկերութեան վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏՐ ՍԵՆ ԿԻԼԶԻՍ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թաւրթիս, Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱՄԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Քաթրճըզլու

Ընկերութեան վառ տեղեկութիւն տանելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆեֆիկին որ կարեւոր արդիւնք մը ի սպորձած քլայ անձնապէս:

5-10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ բօնաֆիյէ ապրանքաց

Մեծ-Նուկայ, Քիւրճիներու դրան կից, Թ. 41-43

Նայնպէս, արանց եւ կանանց հաշտեցուցիչ հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան-Համաժ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Բօնաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յառուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն առկուսութիւն, եւ դիւրամատ-լիկ գիններու առուելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոհ Բաշաւան է իր բազմաթիւ յաճախորդները:

Կէտք է որ Շուկայ ելլող մէջն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

5-10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զոտ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւս եւ նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նարագոյն մեթոններով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մէկն օր կէս օրէ վերջը 2 րեքը արթի օրերը միայն ձրի: 5-10

ՏՍՆ ԵՐԱՆՈՒԹԻՊԻՆԸ

զուսկներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ. երբ անոնց աչքը կը գունատի, մոտամունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տրուի՝ առողջութիւնը շուտ մը կը վերադառնայ. և մոտմունքը կը դադարի: Վասնզի Ըսգոթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնայու կ'օգտէ և անոնց աչքերը փայլեւն և զուարթ կը պահէ: միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵՂՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է: Ասիկայ զԶեղ և Չեր զաւակները գիշեր ու ցորեկ ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշագիւր պէտք է ԸԼԼՄԼ որ շինը վրան այս նշանով վարդապոյն փաթեթի մը ձը է— եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵՂՐՈՒԹԻՈՒՆ

փոշկութիւն առած կ'ըլլաք:

Շինքրու վրայ ասոր սւշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները ինչ ծախս:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏՈՉԱԿ

Վարժարանիս ինչ. տարեշրջանը կը սկսի սեպտեմբեր 6րէ (Ն. Տ). Հաստատու. թեան Տնօրէն վեր. Ռ. Ջէյմսըրո եւ իր Տիկինը արդէն վերադարձած են իրենց երկամեայ բացակայութենէն եւ յառաջիկայ տարի ուսուցչական խումբին վրայ կ'աւելնան Բանաստի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի չրջանաւարաններ որոնց մէկը գլխաւորապէս պիտի ուսնդէ առեւտրական դասընթացքը: Աշակերտները ընտանեկան խնամք կը վայելեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստատութեան մասնաւոր բժիկին հրակողութեան եւ արկին Ջէյմսըրոի մայրական հոգածութեան առկա: Գիշերօթիկ աշակերտներուն տարեթաւակն է 16 օսմ. ասիկէ 8 ասիկէն սեպտեմբերին սկիզբը եւ մնացած 8 ասիկէն յունուարի վերջերը վճարելի:

Վարժարանս յառուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար եւ այս դասին տարեկան մասնաւոր վճարումն է 1 ու կէս ասիկէ օսմ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Բիթի, Պալպրի Հոսու, Կ. Պոլիս. կամ Տնօրէնութեան՝ Պարտիզակ: 3-6

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԷՃ ԱՂԶԿԱՆՑ ՍԿԻՏԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 15ին: Գիշերօթիկ աշակերտակիները կը յառաւելն 14ի երեկոյին: Հաստատութիւնս մեծ բարեօքում կրած է եկդրանական քննութիւնի եւ կապի ներմուծումէն եւ նոր բազմութիւն չինութենէն ի վեր որ մայրաքաղաքի մէջ գտնուածներուն աւելէն ընտիրն է:

Ըստ արժանւան ի նկատ կ'առնուի Հայ դպրոցներու մէջ կատարուած գործը, որպէս կը ներկայացուի այն բերուած վկայականներով: Գրաբար եւ աշխարհագրաւ Հայերէն 'ուսուցչուի խնամով եւ հաստակաւ:

Գոյէճն ունի երաժշտութեան զօրաւոր ճիւղ մը. ուս. կ'աւանդուին դայանի, երգիանի, ցուծակի եւ երգի դասեր: Յառաջիկայ տարի մասնաւոր ուղղորութիւն պիտի ունենան գծադրութեան եւ նկարչութեան: Դարձեալ, ուղղորդներուն կ'ուսուցուի ձեւագիտութիւն. մեքենայով գրել, օդագրութիւն եւ առեւտրական թղթակցութիւն:

Աւելի տեղեկութիւն խնդրողներ իրենց նամակները Գոյէճն Նահապետին ուղղելու են աւագէով. Dr. Patrick, c/o British Post Office, Constantinople. 4-6

ԱՄԱՆԻ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

19 ՕԳՈՍՏՈՍ 1905



ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՅԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԿԻՈՅ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ Գահակալութեան բարեբաստիկ տարեդարձը կը տօնուի այսօր Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան ամէն կողմը, ցնծութեան և բերկրութեան ընդհանուր արտայայտութիւններով ու փայլուն հանդիսաւորութեամբ, իբրև հաւաստիք Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ միլիոնաւոր հաւատարիմ հպատակներուն երախտագիտական սրտազեղ զգացմանց: Օսմանեան չքեղ ոստանը տօնի ու խրախճանութեան մէջ է. ամէն դէմքերու վրայ ուրախութիւն կը ճառագայթէ և ամենուրեք բարեմաղթական օրհներգութիւններ կը կատարուին: Նոյն ոգեւորութիւնը ու ցնծութիւնը նաև բոլոր նահանգներուն, գաւառային քաղաքներուն, մինչև հեռաւոր գիւղական միջավայրերուն մէջ, ուր ամէն ազգի և ամէն դասակարգի ժողովուրդ ինքնաբերական զգացումներով կը մասնակցի բերկրառիթ տօնին և ջերմագին մաղթանքներ կը բարձրացնէ դէպի երկինք: Այս երախտագիտական ու խնդակցական գեղեցիկ արտայայտութեանց կը փութան մասնակցիլ նաև թուրքիոյ մէջ հաստատուած բոլոր օտարազգիները, իրենք եւս իրենց շնորհապարտ զգացմանց բաժինը նուիրելով ցնծադին:

Թուրքիոյ համայն ժողովրդեան համար, որ միշտ և հանապաղ աղօթող է իր սիրեց-

եալ ՎԵՀԱՊԵՏԻՆ համար, Կայսերական Գահակալութեան տարեգարծը փառաւոր առիթ մըն է հանդիսաւորապէս արտայայտելու երախտագիտական այն պատկառոտ զգացումը զոր կը տածէ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻՆ նկատմամբ, Որուն հայրական բարձր հովանիին ներքեւ կը վայելէ ամէն բարիք և շնորհներ:

Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ Գահակալութենէն ի վեր՝ յառաջդիմութեան ու բարգաւաճման դարագլուխ մը սկսած է Օսմանեան հոյակապ Կայսրութեան համար, որուն զինուորական ու նաւային ոյժերը աւելցած են անհունապէս, երկրին տնտեսական ու ելմտական վարկը բարձրացած է զօրաւոր կերպով, կրթական ու բարեգործական հաստատութիւնք բազմապատկուած են, երկաթուղիները բազմաճիւղ կերպով ծաւալած և ճարտարարուեստական ու երկրադործական ձեռնարկութիւնք յարածուն կերպով ընդարձակուած՝ իբրեւ բարօրութեան, զարգացման և հարստութեան աղբիւրներ: Կայսերական Մենդեան և Գահակալութեան տարեգարծները բարեբաստիկ առիթներ են հանրօգուտ ձեռնարկներու և հաստատութեանց սկզբնաւորութեան և հիմնարկութեան համար, որոնք կը բազմապատկին տարուէ տարի Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ բարձր նախաձեռնութեամբ ու Կայսերական հովանիին ներքեւ, ինչպէս այսօր եւս, ի պատիւ Կայսերական Գահակալութեան տարեգարծին, սկզբնաւորութիւնը կ'ըլլայ զանազան հանրօգուտ շինութեանց եւ բարեգործական հաստատութեանց, նոր փայլ մը աւելցնելով ընդհանուր ցնծութեանց:

Օտար Վեհապետներու եւ կառավարութեանց հետ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻՆ տածած բարեկամական յարաբերութիւնները ու անոնցմէ վայելած պատկառանքը փայլուն հաւաստիք մըն են Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ իմաստուն քաղաքականութեան ու նուրբ դիւանագիտութեան, որոնցմով միշտ մեծարելի հանդիսացած է, եւ այսօր՝ Թուրքիոյ ամէն կողմերէն Կայս. Պալատ ուղղուած բարեմաղթական հեռագիրներուն հետ՝ կը հասնին նաեւ խնդակցական հեռագիրներ օտար Վեհապետներէ, իշխաններէ, պետական բարձր անձնաւորութիւններէ, ամէնքն ալ ջերմագին շնորհաւորութիւններ մատուցանելով Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ Գահակալութեան բարեբաստիկ տարեգարծին առթիւ:

Ամենաշքեղ պատրաստութիւններ տեսնուած են Մայրաքաղաքին ամէն կողմը՝ գիւրային լուսավառութեանց համար, թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի վրայ, և այսօր, առաւօտէն սկսեալ, տօնական երեւոյթ մը առած է Կ. Պոլիս: Բոլոր հպատակ հասարակութեանց աթոռանիստ եկեղեցիներուն ու գլխաւոր աղօթատեղիներուն մէջ գոհաբանական հանդիսաւոր մաղթանքներ կը կատարուին ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ արեւչատութեան համար, և Հոգեւոր Պետերը Կայս. Պալատ կերթան՝ բարեմաղթական ու երախտագիտական Ուղերձներ մատուցանելու յոտս Կայս. Գահոյից:

Երկիրը համայն ցնծութեան մէջ է, եւ տեղական մամուլը սրտաբուխ յօդուածներով ու ցնծալից տողերով արձագանգ կուտայ հանրային երախտագիտական ու բերկրալի զգացմանց, որոնց ջերմապէս մասնակից է եւ ինք՝ ամէն ժամանակ վայելած ըլլալով Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒՌԹԵԱՆ շնորհներն ու Կայսերական հովանին, որուն ներքեւ՝ ինչպէս բոլոր հանրօգուտ ու բարենպաստակ հաստատութիւնք, կրթական գործը, ճարտարարուեստները, ուսմունք եւ գիտութիւն, նոյնպէս եւ Լրագրութիւնը կը բարգաւաճի ու կը յառաջդիմէ: Կայսերական Գահակալութեան բարեբաստիկ տարեգարծին առթիւ ամէն կողմէ բարձրացող երախտագիտական ու բարեմաղթական օրհներգութեանց խոնարհաբար ձայնակցելով եւ մենք, կը մաղթենք արեւչատութիւն ու յարստեւ բարեբաստութիւն Օսմանեան մեծագոր եւ լուսամիտ ԿԱՅՍԵՐ ու կը մաղթենք սրտեռանդն:

ՅԱՐԱՅ ԿՅՅՅԵ

ՎԵՀ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ-ՀԱՍԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԵՀԱՊԵՏԵՆ ԹՈՒՐԿԻՈՅ



ՄԱՅՐ ԱԹՈՒ

Մասիսի նախորդ թիւով խօսած էինք Ռուսահայ եկեղեցապատկան կալուածներուն ու դպրոցներուն Մայր Աթոռի վերադարձունելու բերկրառիթ լուրին ու յարակից պարագաներու վրայ, հրատարակելով միեւնոյն ժամանակ 1874ի Օրէնքը որուն համաձայն պիտի կատարուի այսուհետեւ անոնց մատակարարութիւնը, ինչպէս տեղի կունենար հոգելոյս Դէորդ Դ. Կաթողիկոսի օրով:

Այսօր եւս, օրաթերթերէն առնելով, կը հրատարակենք թարգմանութիւնը այն Ուրաղին կամ Հրովարտակին որով կալուածներուն և դպրոցներուն վերադարձուիլը կը հրամայուի:—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ Վարիչ Ծերակայսիքն ուղղուած.

«Վերանորոգելով Մեր Փոխարքայութիւնն ի Կովկաս, այս բարեբեր երկրին մէջ հանրային կեանքի խաղաղ ընթացքը բարգաւաճեցնելու գործը Մեք յանձնեցինք Կովկասեան Կառավարութեան համար Մեր ընտրած հաւատարիմ անձնաւորութեան:

«Եւ այժմ, Փոխարքան, իրեն վստահուած երկրին պայմաններուն մօտէն ծանօթանալէ ետքը, Մեզ մատոյց իր թելադրութիւնները՝ փոփոխելու համար տեղւոյն ընակչութեան Հայ մասին վերաբերող կրթական և հոգեւոր քանի մը կարգադրութիւնները, որք կը դժուարացնեն Հայ եկեղեցւոյ զաւակներուն բարեկարգ և կանոնաւոր կրթութիւնը:

«Իբրեւ բարիք ճանչնալով վաւերացումը Մեր Փոխարքային սոյն առաջարկութեան, Մենք, ներկայ Հրամանագրով, Հայ—Լուսաւորչական հոգեւորականութեան կը շնորհենք կրթական ընդարձակ միջոցներ յօգուտ հանրային զարգացման: Միեւնոյն ժամանակ, հրամայելով, ստորեւ յիշուած հիմերու վրայ, վերադարձնել եկեղեցական հաստատութիւններէն կորչուած կալուածները, կը թոյլատրենք Մեր Փոխարքային՝ իր իրաւասութեան ենթարկեալ երկրին սահմաններուն մէջ այժմէն իսկ գործադրել իր կանոնները, ժամա-

նակաւորապէս, մինչև որ անոնք օրէնսդրական կարգով քննուին,—կանոններ որք պէտք է ապահովեն Հայ թեմականաց մասնակցութիւնը՝ եկեղեցական կալուածոց մասնակաւարութեան նկատմամբ: Եւ որպէս զի յառաջիկային տեղի չունենան թիւրիմացութիւններ, որք կարող են ծագիլ ի գործադրութեան եղող օրէնքներու թերի կէտերուն պատճառաւ, Փոխարքային անկ է քննութեան առնել այս խնդիրը, թէ ի՞նչ յարաբերութիւն պէտք է ունենան Պետական Վարչութիւնք Հայ եկեղեցական հաստատութեանց հետ:

«Ըստ այսմ կը հրամայենք.

«Ա.—Փոխելով 1903 թիւի Յունիս 12ի Բարձրագոյն Հրամանը (Ուրաղ), յանձնել Հայ—Լուսաւորչական եկեղեցւոյ պատկանեալ հիմնարկութեանց սեփականութեան, տիրութեան ու վարչութեան՝ Հայ—Լուսաւորչական եկեղեցիներուն, վանքերուն, հոգեւոր հաստատութիւններուն պատկանող բոլոր անշարժ կալուածներն ու դրամագլուխները, այն բոլոր եկամուտներով որք ստացուեր են սոյն գոյից ու ստացուածոց արքունի մատակարարութեան ժամանակ,—իւրաց առեալ նոյն գոյից ու ստացուածոց պահպանման համար արդէն եղած ծախքերը, ինչպէս նաեւ անոնց յարքունիս ընդունելութեանն (գրաւմանն) համար ծախսուած գումարները: Սոյն կալուածներն ու եկամուտներն եկեղեցական հաստատութիւններուն վերադարձնելու գործը պէտք է կատարուի Մեր Կովկասեան Փոխարքայի համաձայնութեամբը՝ ներքին գործոց նախարարին և երկրագործութեան գլխաւոր կառավարչին հետ:

«Բ.—Հայ—Լուսաւորչական եկեղեցական կալուածներն ու անոնց եկամուտները Կառավարութեան յանձնելու ժամանակ այս հոգեւորականութեան տեղի ունեցած զիմումներուն ու օրինական ձեռնարկութիւններուն վերջնական վճիռներն ի մասին Կովկասի՝ պիտի տայ Մեր Կովկասեան Փոխարքան:

«Գ.—Մինչև որ Հայ եկեղեցական ղըպօրոցներու մասին նոր կանոններ քննուին ու

ծրագրութիւն։ Մեր փոխարքային թոյլ կուտանք որ Կովկասեան փոխարքայութեան սահմաններուն մէջ թոյլ տրուի եկեղեցիներուն ու վանքերուն յարակից բանալ ծխական դպրոցներ, 1874 յուլիս 19ի Բարձրագոյնս հաստատուած կանոններուն հիման վրայ։

«Գ.—Մեր փոխարքային կը յանձնենք.—

1. — Սահմանուած կարգով անյապաղ դիմում ընել, առանց յարաբերութեան մանելու պատկանեալ հաստատութեանց հետ, նոր կարգադրութիւններ հրատարակելու համար Հայ Եկեղեցւոյն վերադարձնելու առթիւ այն անշարժ կալուածներն ու դրամազուխներն որք հանրային կրթութեան նախարարութեան յանձնուելու էին նախարարական յանձնակալքին 1898 Մարտ 26ի և 1903 Յունիս 12ի որոշումներուն համեմատ և Բարձրագոյն հաստատութեամբ։

2. — Պետական Դանձարանի ղեկավարութեամբ քննել և հաստատել օրինագիծ մը Հայ Եկեղեցւոյ կալուածներուն վրայ բնակող գիւղացիներուն հողային կազմակերպութեան վերաբերեալ, և այս ամէն ծրագիրները սահմանեալ կարգով ներկայացնել Մեր վաւերացման։

«Այս ամէն տրամադրութեանց համար վարիչ Ծերակոյտը պէտք է ընէ պարտ ու պատշաճ կարգադրութիւնը»։

Իսկական պատճէնին վրայ Ն. Կ. Վեհափառութեան ձեռքով ստորագրուած է։

ՆԻՔՈԼԱ

Բեղերհոփ.

1 Օգոստոս 1905

Ստորեւ կը հրատարակենք լուրջ ու գեղեցիկ յօդուած մը, — ֆրանսերէն Սդամպուլ լրագրէն թարգմանուած, — որ կրթական հարցին շուրջը դառնալով հանդերձ՝ բոլորովին կը տարբերի դպրոցական խնդիրներու նուիրուած սովորական գրուածքներէն որոնք ամէն օր միեւնոյն բաները կ'ըսեն գրեթէ, յուսահատեցուցիչ միօրինակութեամբ մը յաշորդելով իրարու։ Յօդուածագիրը՝ Տիգրան էֆ. Չայեան (հանգուցեալ Իլիաս էֆ. ի որ-

դին) որ կանոնաւորապէս կ'աշխատակցի այդ թերթին, իր սոյն յօդուածով շատ առողջ տեսութիւն մը կը պարզէ՝ տարեկան քննութեանց առթիւ դպրոցական աշակերտներուն կրած ուղեղային ծայրայեղ յոգնութեանց վրայ և կ'առաջարկէ այդ դրութեան փոփոխումը։ Մեր վարժարաններու վարիչներուն համար ալ խորհրդածութեան նիւթ կրնայ ստեղծել այս յօդուածը և կը փափագինք որ մեր փորձ ու ձեռնհաս ուսուցիչները իրենց կարծիքն ու տեսութիւնները պարզէին անոր մասին, ամփոփ յօդուածներով, Մասիսի մէջ։ Հարցը կարեւոր է ինքնին, ուսանող պատանեկութեան մտային ու ֆիզիքական առողջութեան վերաբերելուն, և համակրելի յօդուածագիրն զժամ պատկերը շատ ճիշդ է դժգողդաբար, ինչպէս իւրաքանչիւրս անոր դառն փորձը կրած ենք՝ մեր դպրոցական շրջանին մէջ, ամաւերջի քննութեանց պահուն։ Կը մնայ դարմանը խորհիլ, դրութեան փոփոխութեամբ, և ասոր համար է որ կոչում կ'ընենք մեր գլխաւոր դաստիարակներուն, ինչպէս թարգմանիչն ալ՝ Պ. Բարսեղ Այվազեան՝ նոյն նպատակով թարգմանած ու զրկած է մեզ սոյն յօդուածը։

Խմբագրութիւն «Մասիս»ի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻԻՐԱՅՈՒՄԸ

Կրթութեան հարցը, անփոփոխ իրերու ճշդութեամբ, պարբերաբար մէջտեղ կը դրուի։

Ճառեր կը խօսուին, աւելի կամ նուազ մաքուր ոճով ու ձեւաբանութիւններով, աւելի կամ նուազ նշանաւոր իրենց էականութեամբ։ Վայելուչ շարժումներ կ'ուրուագծուին։ Տեսչութեանց և դրութեանց ցուցադրում կայ։

Վերջապէս, ճարտասանութեան առատ հոսանք մը կը թուի ոգեւորել, ժամանակ մը, կրթական գործին ընդարմացուցիչ թմրութիւնը։ Պէտք է ընդունիլ որ երկրորդական ուսուցումը կը շարունակէ մնալ ինչպէս որ է։

Ինչ տարբերութեամբ, հին տաղտկացուցիչ դրութիւնն է, ան որ նախորդ սերունդին պատանեկութիւնը տարուբերեց:

Ծանօթութեանց հորիզոնը, հետզհետէ գիտութեանց յառաջդիմութիւններուն հետեւանքով կընդլայնուի. միւս կողմէ, արդի ընկերային պայմանները՝ ուսումը անհրաժեշտ տարր մը կը դարձնեն անհատին գոյութեան և գոցէ տեղի կայ իւրովի հարցնելու թէ ասկէ քանի մը դար վերջ, քաղաքակրթեալ մարդը, պիտի չանցունէ՞ իր կեանքին երեք քառորդը դպրոցներու կամ համալսարաններու մէջ, իր վերջին տարիներուն մէջ միայն իրեն գիրք, ապագայ մը չինելու համար:

Այս հարցը կը ներկայանայ, բնականօրէն, տրամաբանօրէն: Բայց եթէ պէտք է ընդունինք հաստատուն կրթութեան մը անհրաժեշտութիւնը, եթէ պէտք է խոստովանինք անոր բարիքները պարզապէս իմացական տեսակէտով, նոյնքան աւելի կարեւոր կը դառնայ՝ ուսուցման դիւրացումը, նորանոր մէթոտներով: Գաղափարաց այս շարքին մէջ, մեծ յառաջդիմութիւն եղած է: Դպրոցական դասագիրքերը հիմնական բարեփոխումներ կրեցին: Պարզ բաղդատութիւն մը՝ իրարմէ քսանհինգ տարուան ժամանակամիջոցի տարբերութեամբ սովորած քերականութիւններուն միջեւ, կ'ապացուցանէ արդի ուսուցման եղանակին գերազանցութիւնը: Եւ սակայն ժամանակակից պատանեկութիւնը միթէ նուա՞ղ ենթարկուած է մտաւորական արտաքոյ կարգի յոգնութեանց քան թէ անցեալի պատանեկութիւնը:

* *

Մտային տաժանելի յոգնութիւնը կայ ու կը մնայ ուրեմն, ճակատագրականօրէն: Իսկ որ կարելի չէր զայն թեթեւցնել, հակառակ յոյն և լատին լեզուներու ուսուցման վերաբերող բարեփոխումներուն, աշխատուցաւ ֆիզիքապէս զարգացընել անհատին ուժերը, որպէս զի աւելի տոկուն դառնայ մտաւոր աշխատանքի: Բաց օգին մէջ խաղեր և մարմնամարզ, զնահատելի արդիւնքներ տուին: Բայց, խնդիրը լուծում գտնել հեռի է:

Աշակերտը որ քննութեան կը պատրաստուի, արիւն քրտինք կը թափէ իր գրասեղանին առջև, կը տանջէ միտքը, կը ծանրաբեռնէ ուղեղը կարելի եղածին չափ շատ նօթերով, վերջապէս տաժանելի աշխատութեան մը կը մատնուի, յետոյ երթալ զբօսնելու համար մէկ կամ երկու քառորդ ժամ, բաց օգին: Հանգիստը, եթէ երբեք հանգիստ կրնանք նկատել ասիկայ, փոխարինեց յոգնութիւնը: Ո՛հ:

Արդ, անկարելի կը թուի նուազեցնել աշակերտին աշխատութիւնը, գէթ արդի կրթական ծրագիրներով: Բայց միթէ միջոցը կը պակսի՞ զայն կանոնաւորելու, որովհետեւ անկանոն է, հիմնովին անկանոն, և այս կէտին վրայ է որ պիտի ծանրանամ իր ունեցած մեծ կարեւորութեանը համար:

Աշակերտին մտաւոր գործունէութիւնը միեւնոյնը չէ ամբողջ դպրոցական տարեկրթանին տեւողութեանը միջոցին. այս կամ այն ատեն է որ, մտային գործունէութիւնը իր սաստկութեան աստիճանին կը հասնի: Ուղեղը կը գործէ արտասովոր կորովով մը, մտային կարողութիւնները ծայրայեղ աշխատութենէ մը գրգռուած, բնականաբար չեն արտադրեր ինչ որ առաջ պիտի բերէին անդորրութեան մէջ. բայց, միտքը կը գործէ, կը գործէ չարաչար կերպով: Քննութեանց շրջանն է ասի, զլսաւորաբար ամալներ ըննութեանց:

Պէտք է դիտել անոր քսնդիչ արդիւնքները: Ամիս մը կամ քսան օր շարունակ, կարծես սարսուռ մը կը ցնցէ աշակերտները որոնք՝ իրենց խառնուածքին համաձայն՝ դիւրագրգիւ, մտազբաղ, քմշոտ կը դառնան, շարժուձեւերով և խօսուածքով, և կամ անսովոր լուրթեան մը մէջ կը սուղուին:

Զբօսանքի ատեն, բակին մէջ կամ մարգագետնին վրայ, զանոնք կը տեսնենք որ գիրք մը ձեռքերնին բարձրաձայն դաս կը զրուցեն և կը քալեն միօրինակ խոյր քայլերով. մարդ անոնց քալուածքին, շարժուձեւերուն, աչուներուն արտասովոր փայլին մէջ, կը նշմարէ մտասեւեռում մը որ կը

տանչէ դանոնք: Ուղեղային տեւական ճիգ մը, դանոնք մէյ մէկ ինքնաշարժ մեքենաներու կը վերածէ, անգիտակից զիրենք չըջապատող իրերուն, միակ գաղափարէ մը տանջուած, — այն է յաջողիլ քննութեան մէջ, — կարծես բան մը չեն տեսներ, չեն լսեր:

Օրինակները կը վխտան: Ծայրայեղ աստիճան տկարութիւն, թալուկ, ջերմ, վաղանցուկ նուաղում: Ըսել չեմ ուզեր թէ քննութեանց չըջանի միջոցին դպրոցական հաստատութիւնները հիւանդանոցներու կը փոխուին. նաեւ, խօսքս անխտիր բոլոր աշակերտներուն վրայ չէ: Վերջին ծայր ծոյլէ մը պէտք չէ սպասել անսովոր յոյզեր, ծոյլ մը որ ամբողջ դպրոցական տարեշրջանին մէջ ոչինչ մթերած է և որ քննութեանց կը ներկայանայ առանց չափազանց նեղուող երեսնալու իր ծանօթութեանց բեռին տակ: Պարզապէս կ'ուզեմ նկարագրել աշակերտներուն հոգեկան ընդհանուր վիճակը զոր մըտադրութեամբ զննած եմ, և որուն շատ մը օրինակները ուշադրութիւնս գրաւած են:

Բաց աստի, սխալ պիտի ըլլար կարծելը թէ ջանասէր աշակերտը, ան որ միշտ յաջող նիշեր ստացած է, այս յոյզերէն զերծ կը մնայ: Ճիշդ միւսներուն պէս՝ ինքն ալ կը ներկայանայ քննութեանց փորձին, գլուխը բզզիւններով լեցուն, անձկակից հոգեով, անվստահ՝ յաջողութեան մը վրայ որուն սակայն իրեն իրաւունքը կուտայ իր յարատեւ աշխատութիւնը: Ապահով չէ թէ պիտի յաջողի, թէպէտեւ իրօք աշխատած և ուսած ըլլայ: Վերջապէս բաղդի խնդիր մըն է. այս բացատրութիւնը որքան ալ շատ գործածուած, մաշած, այսու հանդերձ չի դադրիր ճշմարիտ ըլլալէ: Բաղդի խնդիր մըն է այո՛, վասն զի կարելի է որ, օրինակի համար, աշակերտը երկրաչափական ամէն քօռնեմները լաւ գիտնայ բաց ի մէկէն: Բաղդի խնդիր մը, քանի որ կարելի է ճարտասան տղայ մը, գրական շատ մը ձիւղեր ունենալով հանդերձ, չիթի թերականական բացատրութեան մը մէջ: Վերջապէս, բաղդի խնդիր մըն է, վասն զի կը տեսնենք անպիտան պզտիկ ծոյլեր, որոնք զուգադիպու-

թենէ մը կ'օգտուին, համարձակօրէն պատասխանելու համար քննիչին հարցման — միակ հարցումը զոր մոռցած չըլլան:

Դեռ կան պարզ պատճառներ ալ. հոգեկան խռովութիւն, չի յաջողելու կասկածէն առաջ եկած դողը, քննիչին անծանօթ, նոր դէմք մը ըլլալը. կարծեսց տարբերութիւնը քննիչին և ուսուցչին միջև, պզտիկ հակառակութիւնները որոնք երբեմն կը ծագին այս վերջինին ու աշակերտին միջև: Ի վերջոյ նիւթական անկարելիութիւնը կայ 10—15 վայրկեանի մէջ հասկնալու, գնահատելու աշակերտին ծանօթութիւնները նիւթի մը վրայ որ աւանդուած է իրեն տասը ամսուան մէջ: Այս նկատողութիւններէն զատ կայ երեւոյթ մըն ալ զոր պէտք չէ ուշադրութենէ վրիպեցնել: Յաճախ աշակերտը քրննութիւնը անցընելէ անմիջապէս վերջ, կը մոռնայ իր առաջուան գիտցածին մեծագոյն մասը: Ուղեղը այսպիսի զարմանալի երեւոյթներ ունի: Տեսնուած է որ յաջող աշակերտներ քննութեանց ժամանակ բաղձացուածին պէս պատասխանած են: Այս պայքարին մէջ յաղթող ելլալէ վերջ, երբ ա'լ ճակատելու բան մը չի մնար իրենց, յիշողութիւննին մէկէն ի մէկ կը տկարանայ: Անկարող կը դառնան պատասխանելու իրենց ընկերակիցներէն մէկին ամենապարզ հարցմանը: Այս երեւոյթը բացատրել դժուար չէ. շատ մը նիւթեր միեւնոյն ժամանակ խճողուելով ուղեղին մէջ, իրարու կը յիւսնեն և զիրար կը չեզոքացնեն և ասոր հետեւանքով մտային գործարանը վայրկեանական անգործունէութեան մէջ կ'իյնայ: Այլ ևս չի կրնար արտադրել, որովհետեւ մտային ծանրաբեռնումը զայն անշարժութեան դատապարտած է:

* * *

Ահա՛ այսպէս է կրթական այս լուրջ խնդիրը որ կը պարզուի մեզ: Դպրոցական ընդհանուր քննութեանց դրութիւնը, իր ամբողջութեան մէջ ո՛ւնի միթէ անվիճելի օգտակարութեան մը հանդամանքը: Պէ՛տք է իբր անհրաժեշտ նկատուի: Այո՛, եթէ արդիւնքները աղետաբեր չըլլային, եթէ մէթոտը անվրէպ երաշխաւորութիւններ ընծայէր այն

գաղափարին նկատմամբ, զոր քննիչը տասը վայրկեանի մէջ քննուող աշակերտին վրայ կը կազմէ :

Բայց ըսինք արդէն թէ այս դատողութիւնը՝ բաղդէն և նպաստաւոր պարագաներէ կախում ունի :

Ո՞ր դասակարգի աշակերտներու համար քննութիւնները անհրաժեշտ են : Աշխատասէրներուն . բայց ժրաջանները ընդհանրապէս կը յաջողին, կ'ըսուի : Միջակներուն . բայց այն ատեն բաղդն է որ կ'օգնէ իրենց : Մոյւլերուն . բայց զանոնք պէտք էր բոլորովին դուրս ձգել : Այս վերջիներուն յաջողութիւնը գայթաղական բան մըն է պարզապէս :

Շրջե՛նք խնդիրը, ուրիշ տեսակէտով մը քննելու համար : Ամալներջի քննութիւնները պարտաւորելով աշակերտը՝ ընդհանուր քաղուածքի աշխատութիւն մը կատարելու, դպրոցական տարւոյն մէջ աւանդուած նիւթերը վերջնականապէս անոնց մտքին մէջ դրոյմելու առաւելութիւնը կ'ընծայեն գոնէ : Ո՛չ : Ուրեմն ի՞նչ բանի օգտակար են, ի՞նչ բանի անհրաժեշտ :

Աւելի գործնական ու օգտակար է, աստիճանական չափով պատրաստել միտքը՝ գործնական և հրապուրիչ դասերու միջոցաւ : Օրը օրին, լաւ հասկցուած, լաւ գործադրուած դպրոցական աշխատութիւնն է որ ուղեղին մէջ կը տպաւորուի և անկից չելլեր, որովհետեւ անհրաժեշտ տարր մը կը դառնայ, փոխանակ ծանրաբեռնում մ'ըլլալու :

Թերեւս առարկուի թէ այդպէս է, արդի ուսուցման ոգին : Ընդհակառակը, ինծի տարբեր կերեւայ : Լիսէներու և երկրորդական ուսուցման յատուկ հաստատութեանց մէջ,—և յօդուածիս նպատակակէտը ասոնք են,—ուսուցիչը կը դասախօսէ իւր թէ բանախօսութիւն մ'ընէր : Երբեմն, իր աշակերտները բացարձակապէս չճանչնար և կը խօսի ունկնդիր բաղմութեան մը համար :

Իր մէթոտին համաձայն, այս բանախօսութիւններէն իւրաքանչիւրը պէտք է նօթագրուի, ամփոփուի, մեկնուի, յետոյ ուսումնասիրուի : Հազուադիւրս են ուսուցիչներ որոնք իրենց աշակերտներուն կարողութեանը

թափանցեն, ամէն մէկուն յառաջդիմութիւնները նշանակեն, հետեւին անոր աշխատութեանը, միեւնոյն ժամանակ հետեւելով բոլորինին ալ : Գործը դժուարին է, գիտեմ, և ամէն ուսուցիչ յանձն չառնելու այս հոգը : Ուսուցիչ ծնած ըլլալու է մարդ՝ ուսուցանելու համար արդիւնաւից կերպով և հաճոյքով :

Ընդհանուր քննութեանց պէտքը բանախօսական դրութեամբ ուսուցման մէջ զգալի կ'ըլլայ բացարձակապէս և անկէ անբաժան է : Ուսուցիչը որ չճանչնար իր աշակերտներուն կարողութիւնը և կամ անորոյ, տարտամօրէն միայն գիտէ, հարկադրուած է, ամալներջին, այս աստիճանացոյցին դիմելու :

Մինչդեռ, այն դասատուն որ կրցած է ընտանեանալ իր աշակերտներուն հետ, զըպրօցական տարւոյն ընթացքին, որ արձանագրած է անոնցմէ ամէն մէկուն արտադրած աշխատութիւնը, զանոնք քննելով յաճախակի որքան որ հնար եղած է, և նշանակելով արժէքը իրենց պատասխաններուն, ամալներջին ընելիք ուրիշ բան չունենար՝ բայց եթէ թուաբանական պարզ հաշիւ մը, գտնելու համար իւրաքանչիւր աշակերտի ստացած թիւերուն միջինը : Այսքանը կը բաւէ իրեն, գիտնալու համար թէ աշակերտը պիտի կըրնա՞յ կարգ փոխել թէ ոչ :

Ամալներջի քննութեանց ջնջումը ի հարկէ չկրնար տեղի ունենալ, առանց ուսուցման մասնաւոր դրութիւն մը ընդունուելու :

Բայց, այս դրութիւնը փնտռել գտնելու պէտք չկայ . արդէն իսկ գոյութիւն ունի : Դպրոցական քննութիւնները, զուրկ ու է գործնական օգուտէ, յլասաբեր են աշակերտին՝ առողջութեան, իմացականութեան, ու չիմութեան տեսակէտներով : Երկու ամսուան արձակուրդը և չարաչար աշխատութենէ մը ետք վայելուած հանգիստը չէ՛ որ թարմութիւն մը պիտի տան աշակերտին ուղեղին : Բնախօսականօրէն, քննութիւններէն առաջ եկող մտաւորական չարիքը չիփոխարինուիր արձակուրդի հանգիստով :

Ուղեղը մարդուս էն սքանչելի գործարանն է, պէտք է մեղմիւ հոգ տարուի, որ-

պէս զի իր մտաւորականութիւնը պահպանելով, արտադրէ յարատեւօրէն, առոյգ ու կայտառ: Մի միայն վարժարանին մէջ չէ որ մեզի անհրաժեշտ է այն: Ուղեղին առողջութեանը մանաւանդ պէտք ունինք ապագային, կեանքի ասպարէզին մէջ: Չափաւորութեամբ գործածենք այդ հիասքանչ գործիքը:

ՏԻԳՐԱՆ ԶԱՅԵԱՆ

Տ Ե Ր Թ Ա Թ Ի Կ

(ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Երբոր կայարանէն դուրս ելանք, զարմացայ որ Թաթիկ չեկաւ իր ձիերը մատուցանելու: Պ... գիւղը պիտի երթայինք օդափոխութեան, և կայարանէն անդին տակաւին երեք չորս ժամուան ճամբայ մը ունէինք, զոր ձիով պէտք էր կտրել: Բայց Թաթիկ մէջտեղ չկար: Կարելի չէր որ ուրիշ յաճախորդ առած ըլլար, որովհետեւ առտուան առաջին կառախումբով եկած էինք:

— Մինա՛, ձայնեցի ուրիշ ծանօթ ձիապան տղու մը, Թաթիկը ո՛ր է:

— Ո՛ր Թաթիկը...

— Բանի՛ Թաթիկ կայ, ձիապանը...

— Չոլախին համա՞ր ես...

— Այո՛, ո՞ր սատանին ծակը մտեր է:

Մինա ժպտեցաւ:

— Գործը թէքք ըրաւ, ըսաւ ժպտելով, հիմայ ժամն է...

— Ժամը... Թաթիկը ի՞նչ գործ ունի ժամը...

— Տէրտէր եղաւ, տէրտէ՛ր...

Թաթիկը տէրտէ՛ր... հաւտալիք բա՞ն էր... ուրկէ՛ ուր: Կար երեք տարի մը որ գիւղ չէի եկած, և ապահովաբար ասանկ անակնկալի մը չէի սպասեր: Թաթիկը տէրտէ՛ր... բայց ասիկա անկարելի էր ա՛յնքան որքան լուսինը երկինքէն փրցնելը, որքան ծովուն ցամքիլը: Եւ սակայն եղեր էր:

— Զիե՛րդ բե՛ր, Մինա՛, ձայնեցի ձիապանին:

Զմայելի ճամբայ մըն էր գիւղին արահետը: Երկար ու չիտակ կառուղի մը ունէինք մեր առջին, երկու կողմէն եղերուած բարձրաբերձ ծառերով որոնց անուշ խարշափը տեսակ մը դիւթական երաժշտութեան կը վերածուէր հովին յորձանքներուն գիրկը: Ծառերէն անդին, ճամբուն երկու կողմերը, անվերջ արտեր կը տարածուէին, գունազեղ ու յղի, և հրաշալւաւ արեւ մը կ'ոսկեղօծէր հողին երկունքի ծիւրը, ժպտուն աւետիսներ մօտալուտ առատ ու բազմատեսակ արգասաբերութեան: Երկինքը չքեղ՝ վեհութիւն մը ստացած էր մեր գլխուն վրայ. ձերմկորակ գուլաներ դանգուր գանգուր կը թաւալէին իր մաքուր և անսահման կապոյտին բոլորափքը, կարծես սպիտակավարս կեղծամ մը՝ որ թարմազեղ աղջկան մը գըլխուն անցուած ըլլար:

Եւ ճամբան այդպէս անվերջ կ'երկարէր. միշտ նոյն մեղմ հովը, միշտ նոյն ծառերը, միշտ նոյն արտերն ու երկինքը: Ամբողջ երեք ժամ ուրիշ տեսարան չկար մեզի համար: Գիւղին ժամ մը մնացած միայն՝ կառուղին կ'ոլորտէր օձի պէս, կը սողար մէկ քանի բլուրներու եղերքէն, գօտիի պէս կը պըլլուէր բլրակներու կողքին, և կ'երթար կը միտուէր գիւղին կուշտը, ձիւդ եկեղեցիին առջեւ:

Ճամբան՝ ուրիշ խօսք չունէինք, այլ միայն Թաթիկի խնդիրը: Եւ իսկապէս ալ կ'արժէր խօսիլ այդ անակնկալին վրայ: Զիւն լեզու ելլելը տեսնող մը թերեւս այնքան չղարմանար՝ որքան Չոլախ Թաթիկը ճանչցող մը պիտի զարմանար՝ զայն մէկ օրէն միւսը քահանայ դարձած տեսնելով: Ասիկա պարզապէս աներեւակայելի էր: Թաթիկ համբաւաւոր էր այդ կողմերը: Իրեն համար ստացուածքի և սեպհականութեան սահման չկար: Ո՛ւր որ կոխելու ըլլար, ինչ որ առնելու ըլլար՝ իրն էր: Եթէ յօժար կամքով տային՝ աղէկ. իսկ եթէ չտային՝ կը գողնար: Եւ որովհետեւ գողցած ատենը անորժակը շատ կը բացուէր, գիւղացիք աւելի կը նախընտրէին ուղածը տալ ու ճամբել, մէկի տեղ երկու և աւելի փնտրի չենթարկուելու համար:

—Ծա՛, Թաթիկ, Մարգարենց տանձերը եաման եղեր են...

Այսքանը կը բաւէր: Տասը վայրկեան վերջ տանձերը կը հասնէին, խնամով շարուած կողովի մը մէջ, եթէ երբեք տէրը կամովին տուած էր, եւ կամ տոպրակի մը խորը՝ եթէ երբեք գողնալու հարկ ծագած ըլլար:

Կարճահասակ, թուխ, լեցուն երեսով ու գռուղ մազերով մարդ մըն էր, արտաքոյ կարգի ուժեղ ու դիւրաշարժ: «Կապկի ձագ է շան սատկելիք պտուղը», կ'ըսէին գիւղացիք, իր անսովոր ճկունութեանը ակնարկելով: Կրնար բարակ ձողէ մը վեր մագլցել ամենայն դիւրութեամբ, ինչպէս նաեւ սեպ ու առապար խորխորատներէ վար իջնել, առանց հաւասարութիւնը կորսնցնելու: Գիւղի տղայ էր, արհեստով ձիապան, և ինչ ձիապան: Անոր ձին՝ Չախըռը, կրնար վիշապի պէս թռչիլ ցից սարերն ի վեր, լեռնէ լեռ սուրալ, անդունդներու վրայէն ցատկել, —ինչպէս կը հաւատտէին գիւղացիք՝ տեսակ մը ջերմնաւոր երկիւղածութեամբ: Այդ ձիուն վրայ մենք ալ հեծած էինք բազմիցս, բայց մենք ուրիշ բան, Թաթիկն ուրիշ. ան թեւ կուտար ձիուն, ան կը հրգէէր անոր կողերը, և ա՛լ անկէ վերջ՝ արագաթիւ թռչունի մը հուժկու ճախրանքը պէտք էր իրեն հասնելու համար: Նաման, եաման կը հեծնէր Չօլախ Թաթիկը:

Ամէն անգամ որ գիւղ երթայինք, անպատճառ Թաթիկը կ'ըլլար մեր ձիապանը: Կայարանէն կ'առնէր մեզ, և որչափ ալ ձիերը վազցնէինք, կրկին հետիոտն մեզի հետ միեւնոյն ատեն կը կտրէր գիւղին ճամբան: Երկու ձի ունէր, երկուքն ալ պարտքով գնուած, մէյ մը համբաւաւոր Չախըռը, մէյ մըն ալ գորշագոյն ձի մը, առանց անունի: Տարիներ կար որ կ'աշխատէր, և պարտքը կը մնար անվճար. ամէն տարի տոկոսը տուկոսին վրայ կը բարդուէր. պարտքին գուժմարը կը մեծնար, բայց Թաթիկի հոգը չէր:

—Մըկըր չորպաճին մերն է, կ'ըսէր, ամէն անգամ որ պարտքին խօսքը կը բանայինք, ասանկ չպիտի մնամ ա՛յ, հարկաւ որ մը կու-

տամ. կը բաւէ որ չորպաճին աղուոր բռնէ հաշիւն:

Եւ իրաւ ալ չորպաճին շատ աղէկ կը բռնէր հաշիւը: Հինգ տարի մը կար որ ձիերը գնուած էին, և Թաթիկի նախնական պարտքը, կարծեմ քսաներեք ոսկի, կարգ մը վաշխառուական գործառնութիւններու շնորհիւ հարիւրը անցած էր: Չորպաճին հանրածանօթ էր արդէն իր հաշուադիտութեամբ: Բարեսէր ու ողորմած մարդու համբաւ մը և շատ մեծ ազդեցութիւն ունէր այդ կողմերը, նեղութեան մէջ ինկած յետին գեղջուկը եթէ իրեն դիմելու ըլլար, ամէն ատեն կրնար փոխ դրամ գտնել: Այսքանը կը բաւէր իր բարեգործ մարդու համբաւը զօրացնելու համար: Անկէ անդին՝ ոչ ոք կը խորհէր թէ չորպաճին իր տուածին երեքպատիկը, յաճախ քսանապատիկը ետ կ'առնէր, ընդհանրապէս ամենաանխիղճ միջոցներով: Իրմէ վնասողներն անգամ կը մոռնային այս պարագան, և անգամ մը խաբուելէն ու վնասուելէն վերջ, կրկին իր դուռը ափ կ'առնէին դրամական անձկութեանց միջոցին: Որ անծանօթը որ գիւղ գալու ըլլար, միայն բարի վկայութիւններ պիտի լսէր Մըկըր չորպաճիի մասին. և սակայն, այդ մարդը երկար տարիներէ ի վեր տղրուկի մը պէս փակած էր գիւղացւոց, և անոնց աշխատութեան իրաւունքը կը կապտէր տոկոսներով: Կարելի չէր վաշխառուի յոռեգոյն տիպար մը գտնել:

Թաթիկ ալ, գիւղացւոց պէս, կ'ականածէր այս մարդէն. չորպաճին միակ մարդն էր որ իր քմահաճոյքին առարկայ չէր դառնար: Կը վախնա՞ր արդեօք, ո՞վ գիտէ: Չորպաճին իսկապէս պատկառաղդու անձնաւորութիւն մըն էր, մեծղի, քիչ մը հաստիկ, խոժռաւդէմ ու տիրական երեւոյթով մարդ մը՝ որ ոչ խօսքի առջև կը ձկէր, ոչ ալ անձի: Դաղքէն՝ յաճախ քարոզիչ եպիսկոպոսը կուգար գիւղ, թեմական այցելութեանց առթիւ, և ամբողջ գիւղին մէջ չորպաճին միայն կը համարձակէր անոր հետ հակաճառելու: Գիւղական համայնքի մը մէջ՝ այսքանը կը բաւէր մարդ մը ընդհանուր ականածանքի առար-

կայ դարձնելու համար։ Տարիներու ընթացքին՝ այդ ակնածանքը ասորիստի մեծացած էր, որ Մըկըր չորպաճի տեսակ մը հաշտարար դատաւորի հանգամանք ստացած էր գիւղացւոց աչքին։

Շատ անգամ՝ երբ Թաթիկ չափը անցուցած ըլլար, գիւղացիք կ'երթային անոր ոտքը կ'իյնային։

— Դուն գիտես, չորպաճի, դիմանալիք բան չէ, երթալով իժ կը դառնայ կոք։

Չորպաճին կը խոստանար յանդիմանել զայն, խեղճերը կը մեկնէին յուսայից, բայց Թաթիկ չէր փոխուէր. ոչ միայն չէր փոխուէր, այլ քանի կ'երթար այնքան անտանելի, այնքան աներես կը դառնար։

Այն աստիճան կը սիրէր ուրիշներու նիւթական վնաս պատճառելը որ շատ հեղ չէր փնտռեր իսկ թէ ի՞նչ պիտի ըլլայ շահելիքը։

Անգամ մը՝ մինչդեռ գիւղ կը գտնուէինք, առտուանց կանուխ գինքը տեսանք դէպի քաղաք տանող ճամբուն վրայ։ Միշակն էր, և ահագին տակառ մը գլորելով կը քաշէր ու կ'երգէր։

— Ո՛ր, հարցուցինք իրեն։

— Քաղաք, բաղարի օր է։

Իսկապէս ալ, ամէն կիրակի, մօտակայ գաղթականի գիւղերէն կ'ինքը քաղաք կ'իջնէին՝ հաւ, հաւկիթ, կաթ, պանիր կամ իւղ ծախելու։ Բայց չէինք հասկնար թէ Թաթիկ ի՞նչ գործ ունէր այդ գիւղացիներուն հետ։ Տարակոյս չկար, անպատճառ գողութեան համար վար կ'իջնէր։

— Այդ տակառը ինչ է, հարցուցինք նորէն։

— Կաթ պիտի գնեմ, կաթ, ըսաւ խնդալով, այսօր բաղարի օր է...

Ու երգը բերանը մեկնեցաւ, առանց աւելի բան մը յայտնելու։

Յաջորդ օրը իմացանք ամէն բան։ Թաթիկ՝ տակառը կը հաստատէ պաղարին ծայրը, կը կանչէ բոլոր գեղջուկ կ'ինքը, և անոնց քով գտնուող ամբողջ կաթը սակարկելով լեցնել կուտայ տակառը։ Միամիտ կ'ինքը՝ առանց բանէ մը կասկածելու՝ կուգան իրենց կուժերը կը պարպեն, ու կը շարունակ մէկ կողմ՝ դրամին առնելու համար։

Երբ ա'լ բնաւ կաթ չի մնար, Թաթիկ կը յայտարարէ թէ վրան պատրաստ դրամ չունի, թէ դրամը գիւղը մոռցած է, և թէ հետեւաբար յաջորդ շաբթու միայն պիտի կրնայ վճարել։

— Զիս ամէն մարդ կը ճանչնայ, կը յարէ, վստահութիւն չունի՞ք վրաս, գալ շաբթու կրկին պիտի գամ կաթ գնելու, ամէնը մէկ կը վճարեմ։

Բայց գեղջուկներու սովորութեան մէջ չկայ այս կարգի գործառնութիւն։ Կ'ինքը մօտիկ չեն ըներ, և անպատճառ իրենց դրամը կը պահանջեն։

— Ի՞նչ ընեմ, կ'ըսէ Թաթիկ, ձեր գիտնալիք բանն է. քանի որ իմ վրաս վստահութիւն չունիք, ետ առէք ձեր ապրանքը, ահաւասիկ կեցած է։

Անիծելով, հայոյելով՝ կ'ինքը կ'իյնան տակառին վրայ՝ իրենց կուժերը լեցնելու։ Բայց ահա կագ ու կուիւ։ Մէկը կ'ըսէ թէ իր կուժը լեցուն էր, ուրիշ մը կը պոռայ թէ այսինչին կուժը հազիւ օխա մը կաթ կար, ձայները կը բարձրանան, բաժանման գործը կը խանգարուի, իրարու մազ կը փեթթեն, կը պոռան ու կը ճչեն։ Իսկ Թաթիկ՝ անկիւն մը քաշուած, փառաւորապէս կը ղուարճանայ և կուիւ կը հրահրէ, ի հարկին մէկ կամ միւս կնոջ պահանջման ոյժ տալով։ Ի վերջոյ, տեսնելով որ խնդիրը բոլորովին կը կնճռոտի, գիւղ կը դառնայ՝ առանց իսկ տակառը առնելու։

— Ծա ի՞նչ անօթի շան խելք է ըրածդ, կ'ըսեն գիւղացիք, երբ խնդրին կը տեղեկանան, ծա տակառը ինչո՞ւ ձգեցիր։

— Ասանկ քէյֆով գործին տակառ մը թող զոհ երթայ, կը պատասխանէ։

Ինք բան մը չըսեր թէ և, բայց գիւղացիք կը հասկնան թէ տակառն ալ մօտակայ է գիւղերէն գողցած է։

Այս խաղերը մէյ մէկ «քէյֆով գործ» էին իրեն համար։ Անգամ մը որ յարմար առիթ մը ձեռք ձգէր, ա'լ բնաւ դուր ու դադար չունէր. կերակուրը կը լքէր, քունը կը ծախէր։

Աչնան մէջ՝ շատ անգամ որսորդներ

կ'անցնէին գիւղէն՝ որ տեսակ մը որսական կայք դարձած էր՝ մերձակայ անտառներուն շնորհիւ։ Թաթիկ գիտէր թէ ո՞ր որսորդը անճարակ է, և ո՞րը վարպետ։ Գիտէր նաև թէ անճարակ որսորդ մը անպատճառ հետը երէ մը տանիլ կ'ուզէ, գոնէ վրան չխնդացնելու համար, և անմիջապէս անոր մօտենալով՝ կը յայտնէր թէ ծախու ճագար ունի, ողջ ողջ։

Ողջ ճագար, ինչ մեծ երանութիւն որսորդի մը համար։ Ամբողջ դիւցազներգութիւն մը կարելի էր հիւսել որսորդի մը վրայ՝ որ կրնար այդպէս ճագարը ողջ բռնել։ Սակարկութիւնը կը կատարուէր փութով, և Թաթիկ որսորդին կը յանձնէր իսկապէս ողջ ճագար մը՝ որ սակայն յաճախ կը մեղաւոր կատուի պէս։

— Խեղճ կենդանի, կ'ըսէր Թաթիկ ճագարը յանձնած ատեն, վախէն ձայնը աւրուեր է։

Անպիտանին ծախածը ճագար չէր, այլ կատու։ Տարօրինակ յատկութիւն մը ունէր կենդանիները մորթաղերծ ընելու, և անգամ մը որ ճագարի մորթ մը ունենար, կրնար սքանչելապէս զայն կարել կատուի մը վրայ, առանց թերի կէտ մը ձգելու։ Պէտք էր չա'տ մօտէն, և չա'տ ալ ուշադրութեամբ զննել՝ խաղը երեւան հանելու համար։

Որսի եղանակին՝ գիւղին մէջ կատու չէր մնար որ այդ կերպով քաղաք չփոխադրուէր։ Օր մը սակայն, Թաթիկ նոյն ինքն Մըկըր չորպաճիի կատուն «հաւատքէ կը հանէ», — ինչպէս կ'ըսէին գիւղացիք, — և չորպաճին բարկանալով, կ'որոշէ վերջ տալ Թաթիկի խաղերուն։

— Ծա՛, կ'ըսէ անոր, ծա աս քուկին վերջըդ ո՞ր պիտի երթայ, ծա աս ելլելիք ճամբայ չէ, ծա դուն և՛րբ մարդ պիտի ըլլաս...

Թաթիկ՝ պարագային յորմար դէմք մը կը չիմէ։

— Ոտքիդ մատաղ, չորպաճի...

— Ծա շանը ոտքին մատաղ եղիր, ծա շան սատակ կը հանեմ քեզ...

— Լուս արեւիդ մեռնիմ, չորպաճի...

— Սատկիս տէ խալըսի՛ք, շան սատկելիք ծնունդ, գեղին պատիւը կերար...

Թաթիկ կը շարունակէ պաղատիլ, խոստում խոստումի վրայ կ'ընէ, և վերջի վերջոյ կը յաջողի մեղմել չորպաճիին բարկուածիւնը։

Ատոր վրայ Թաթիկ ձիապան կը դառնայ։ Չորպաճին իր ձիերէն երկուքը կը յանձնէ պարտքով, տարուան մը մէջ դրամը հատուցուելու պայմանաւ, և գիւղացիք կը հանդարտին քիչ մը ատեն։ Տարին կ'անցնի, մուրհակները կը նորոգուին, պարտքը կ'աճի, և Թաթիկի բնաւորութիւնն ալ տակաւ կը սկսի արթննալ։ Միայն, ա'լ կը զգուշանայ չորպաճիին դպչելէ։

Ահա՛ այս տեսակ մարդ մըն էր զոր քահանայ դարձած կը գտնէինք՝ մէկ քանի տարուան բացակայութենէ վերջ։

Ինչպէ՞ս տեղի ունեցած էր այդ հրաշքը։ Դժանի մը անգամ հարցումներ ուղղեցինք մեր ձիապանին, բայց ան ալ մօծ բան մը չէր գիտեր։

— Չորպաճին տէրտէր չիմեց, կ'ըսէր ու կ'երթար։

Չիբըրը կը քչէինք անընդհատ։ Այդ խնդրին հանգոյցը միայն գիւղին մէջ կրնայինք քակել, նոյն ինքն Տէր Թաթիկի օգնութեամբ։

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

(Մնացեալը լաջորդով)

ՌՕՊԵՐԴ ՊՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի սեպտ. 1/14ին։ Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղադրուած կատարելութեամբ աւանդելու համար։ Վարժարանիս մասնաւոր բժիշկը ուսանողներու առողջութեան, մարմնամարզներու և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ։ Մարմնամարզի նոր և գեղեցիկ մասնաւոր շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն։ Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ։

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԱՐԲԵՅՈՂ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ(*)

Ինչպէս արդէն քանիցս ըսինք «Արբեցուծեան դէմ» գրած յօդուածներնու մէջ, թէ Քաղաքակրթութիւնը շատ բաներ ըրած է սոյն սոսկալի մոլութեան առաջը առնելու համար, թէ անիկա շարունակ կ'աշխատի, շարունակ միջոցներ կը խորհի արբեցուծիւնը հիմէն ջնջելու համար, իտէալ մէթոտներ ցոյց կուտայ, ամէնքն ալ դիրաւ գործադրելի ամէն միջավայրի ու ամէն երկրի մէջ:

Անգլիոյ ներքին գործոց պաշտօնատան այն քննիչը, որուն պաշտօն տրուած էր գիւնդները զգաստութեան բերելու մասին ծրարադիր մը պատրաստել, ինչ նպատակի համար էր: Ո՛չ ապաքէն կուրի Արբեցուծեան դէմ ու միջոցներ խորհիլ անոր առաջը առնելու համար: Քննութեանց արդիւնքը, զոր տեղեկագրի մը ձեւով յիշեալ քննիչը մատոյց ներքին գործոց նախարարին, այս մասին լաւ օրինակ մը ու միանգամայն հաստատ փաստ մըն է:

Չգաստարանները լաւագոյն արդիւնք ձեռք բերած են: Անցեալ տարի 1430 գիւնդ յանձնուած էին այդ զգաստարաններուն և գրեթէ յուսահատական պարագաներու մէջ իսկ գոհացուցիչ արդիւնքներ տեսնուած են. բայց, ըստ որում դարմանները ժամանակի կը կարօտին, հարկ անհրաժեշտ է արգելա-

(*) Ծ. Խ. — Երիտասարդ բժիշկը՝ Տօքթ. Տ. Ալլահվէրտի՝ որ մասնաւոր զնահատման արժանի եռանդ մը ցոյց տուաւ իր հակալքողական օգտաշատ ու բազմատեսակ հրատարակութիւններով թէ՛ Մասիսի և թէ՛ ուրիշ թերթերու մէջ, այս յօդուածով բողոքովին նոր տեսակէտ մը վեր կ'առնէ, այն է դեռատի կամ մանուկ «խմողներու» վիճակը: Իր հակիրճ նօթագրութիւնը արժանի է ծընողքներու և դաստիարակներու լուրջ ուշադրութեան, վասն զի մեր մէջ ալ կրնան գտնուիլ, թէ և ցանցառ թիւով, կանուխէն արբեցուծեան վարժուող տղաք որոնց մեղքը կը ծանրանայ իրենց ծնողաց վրայ:

փակի միջոցը բաւական երկարել, զգաստարանի դրութիւնը յաջողցնելու համար:

Քննիչը կը կարծէ թէ՛ մէկ տարուան արգելումը զգաստացուցիչ արդիւնք կրնայ առաջ բերել սակաւաթիւ գիւնդներու վրայ. բայց ստուար մեծամասնութեան հաշիւով՝ այդ ժամանակամիջոցը անբաւական է, և ծախքը արդիւնքին համեմատական չէ: Կան որ երկու տարուան արգելափակի վճիռէն բողոքովին օգտուած դուրս կ'ելլեն այդ հաստատութիւններէ, բայց ո՛չ մեծամասնութիւնը: Երեք տարուան վճիռը ամենալաւ ժամանակամիջոցն է մնայուն կերպով օգտակար ըլլալու ստուար մեծամասնութեան: Իրաւ է որ ոմանք մտաւորապէս անկարող են մեծ բարւոքումի մը, որչափ երկար առնեն ալ արգելքի տակ մանեն, և բողոքովին աւելորդ է արձակել կէս բարւոքած գիւնդ մը:

Տիկին Շոն Վան Ֆորսթ, որ Նոր Ալխարհի նշանաւոր կին գրող մըն է, զգաստարաններու, մասնաւորապէս գիւնդ տղոց յատուկ դատարանի մը կազմութեան և գործունէութեան մասին հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը հաղորդէ: Կարեւորութենէ զուրկ չըլլար անշուշտ, երբ անոր քանի մը մասերը ներկայացնեմ ընթերցողներուս, այսու անգամ մը ևս ապացուցանելու համար սա պարագան թէ Բժշկութիւնն ալ, Գիտութիւնն ալ, Քաղաքակրթութիւնն ալ, վերջապէս Մարդկութիւնը ամբողջ իրենց կարողութեան, ձեռքերնուն եկած չափով կ'աշխատին արբեցուծեան ու ալքոլամոլութեան առաջը առնելու:

* *

Անցեալ տարի Լոնտոնի մէջ գումարուած Մանկապաշտպան Համաժողովը մեծապէս զնահատեց Մ. Նահանգաց մէջ տարուած ջանքերը, աղուն թէ՛ բարոյական և թէ՛ մանաւանդ ֆիզիքական զարգացման համար: Այդ փորձերուն մէջ ամէնէն աչքառուն է մասնաւոր դատարանի մը կազմութիւնը՝ տղոց յանցանքները դատելու համար: Տասը տարի առաջ, տասնըվեց տարեկանէն վար եղող գիւնդները, քսակահասները, գողերը բաւական հազուադէպ էին Նիւ—Եօքսթի

մէջ : Մարդկային խճողումին հետեւանքով տղան փողոց ինկաւ , բարոյական վատթար միջավայրի մը մէջ ապրելով :

Փոքր մեղապարտներու թիւը այնքան չատցաւ որ , դատաւորները յօդուածներ աւելցուցին պատժական Օրինագրքին վրայ , գինով տղոց յանցանքները ու ոճիրները անջատորէն դատելու համար : Կը յուսացուէր այսպէսով առաջըը առնել յարաճուն յանցանքներու , փոքր տղոց կողմէ գործուած : Մասնաւորապէս գինով տղոց համար հաստատուած դատարանը առաջին տարուան մէջ 7000է աւելի տղաք դատեց : Այս նոր դրութեան առաւելութիւնը գնահատուեցաւ դատաւորներուն կողմէ :

Օրուան ամէն ժամուն , գինով տղոց դատարանը խճողուած է : Գինով տղաք , ծնողք , վկաները , ամէնքն ալ հոն են : Մանկապաշտպան Բնկերութեան ներկայացուցիչը դատաւորին կը ներկայացնէ իր գրաւոր տեղեկագիրը և ի հարկին , խօսք կ'ուզէ , ի նպաստ տղուն խօսելու համար : Կը լսուին վկանները , կը հարցաքննուին ծնողքները : Դատաւորին բովանդակ ջանքը կը կայանայ յանցանքին սկզբնական պատասխանատուութիւնը գտնելուն մէջ : Օրինակի համար , դատարկապորտութեան հետեւանքով կատարուած գողութեան մը մէջ կը փնտռեն թէ վայրագ հօր մը աղղած վախին պատճառաւ գործուած է յանցանքը : Մօրը անհոգութիւնն ալ նկատի կ'առնուի , երբ գէշ ընթերցումներու աչք գոցած է : Դատաւորը անջատաբար հարցաքննելէ վերջ տղան ու ծնողքը , դէմ առ դէմ կը բերէ զանոնք : Ծնողք յաճախ տուգանքի կը դատապարտուին , իսկ տղաք կ'արձակուին ծնողքներու հսկողութեան տակ մնալու պայմանով սակայն : Եթէ տղուն դպրոցական լիւրճին լաւ նիշերով լեցուն է , եթէ որոշեալ ժամերուն ներկայանայ Մանկապաշտպան Բնկերութեան , ու իր յանցանքներուն մէջ չի նայ նորէն , որոշեալ ատենէ մը վերջ ազատ կ'արձակուի :

Բնդհակառակը , եթէ երբեք թերանայ իր յանձնառութիւններուն մէջ , զգաստարան մը կը զրկուի : Տղոց դատարանին դատաւոր-

ները մասնաւորապէս կ'ուսումնասիրեն մանկութիւնը : Ատոնց մէջէն ամէնէն ձեռնհասներէն մէկը սա յայտարարութիւնը ըրաւ .—

«Տղուն յանցանքը առաջ կուգայ ծնողաց անհոգութենէն : Այս պատճառաւ իւրաքանչիւր պարագայ անհատապէս պէտք է դատել : Խնամակալը պարտի իւրաքանչիւր տղու այցելել իր տան մէջ , յանցանքին ճշմարիտ շարժառիթը տեսնելու համար : Տղուն չափահաս մեղակիցը , պատասխանատուութիւնը հաստատուած պարագային , առ առաւելն 5000 ֆրանք տուգանքի կամ մէկ տարուան բանտարկութեան կը դատապարտուի : Տղայ մը դատելու համար , պէտք է անոր անձնական տեսակէտը նկատի առնել , պատուոյ բռնազդը ըմբռնել . բանաւոր չէ միեւնոյն միջոցները գործադրել չափահաս մարդոց եւ տղոց վրայ , ինչպէս միեւնոյն դեղաչափը (soq) չի տրուիր անոնց՝ բժշկութեան մէջ , սա պատրուակով թէ անոնք նոյն հիւանդութեան ենթակայ են : Բարեկամներու պէս կը վարուիմ գինով տղոց հետ եւ իրենց ընկերներուն առջեւ անուանարկիչ խօսք բնաւ չեմ ընել : Քանի մը ամիս առաջ ինէ խնդրուեցաւ զգաստարան զրկել տղայ մը , որուն յանցանքները կը կրկնապատկուէին և միշտ կը խուսափէր իր խնամակալներուն հսկողութենէն . հրաւիրեցի զայն , միաօին ճաշելու : Տղան ընդունեց . երկարօրէն խօսեցանք իրարու հետ : Ըսի թէ քիչ մը ծաղրելի կը դառնայի , եթէ շարունակէի ազատ արձակել յանցաւոր տղաքը , որոնք նորէն գէշ ճամբու կը հետեւէին : Տղան պատասխանեց թէ հայրը գինով էր միշտ եւ մայրը կը ծեծէր զինքը եւ թէ անոնց ներկայութենէն ազատիլ կ'ուզէր : Արձակեցի զինքը , յայտարարելով թէ իմ անունս պիտի արատաւորէր , եթէ իր գողութիւնները ու գինովութիւնը շարունակէր :

«Հարկ է արդեօք ըսել թէ երկու օր վերջ տղան կըսպասէր աշխատութեանս սենեակին առջեւ , իրեն գտած գործիս աշխատելով : Ալ եւս չի թողուց այդ գործը , ըստ որում հասկցած էր թէ իր անցուցած կեանքը՝ կեանք չէր եւ ապագային համար իսկական փորձանք մը պիտի ըլլար իր գլխուն» :

ՏՕՔՔ : Տ. ԱԼԼԱՆՎԷՐՏԻ ՈՐԴԻ



ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

Ազգ. Պատրիարքարանի կողմէ հրատարակուած Պաշտօնական Յայտարարութեան համաձայն, այս առաւօտ, ժամ 2ին, Մայր Եկեղեցւոյ մէջ գոհաբանական հանդիսաւոր մաղթանքներ կը կատարուին, Կայսերական Դահլալութեան բարեբաստիկ Տարեգարձին առթիւ: Արարողութեանց կը նախագահէ Ս. Պատրիարք Հայրը՝ շրջապատուած եպիսկոպոսական դասէն, քարոզիչ վարդապետներէ ու աւագներէցնէրէ: Գոհաբանական Մաղթանքին ներկայ կը գտնուին Կրօն. և Բաղ. Ժողովներու անդամները, Տեսուչ Խորհուրդներու, Հոգաբարձութեանց, Խնամակալութեանց, Թաղ. Խորհրդոց ներկայացուցիչներ և բազմութիւն ժողովրդեան: Արարողութեանց աւարտումէն ետք, Ս. Պատրիարքը Կայս. Պալատ կ'երթայ՝ յանուն Ազգին շնորհաւորական ու երախտագիտական Ուղերձ մը մատուցանելու յոտս Գահոյից Ն. Կ. Վեհափառութեան:

* * Օրերէ ի վեր մեծամեծ պատրաստութիւններ տեսնուած են շքեղապէս լուսաւարդելու համար այս գիշեր՝ Ազգ. Պատրիարքարանը, Նրուսաղեմատունը, Ս. Փրկչեան Հիւանդանոցը, Խասգիւղի Գալֆանի Որբանոցը, եկեղեցիներու և վարժարաններու ճակատներն ու դռները, ինչպէս նաև Ս. Պատրիարք Հօր բնակարանն՝ ի Բերա, բարձրաստիճան եկեղեցականներու և բոլոր ծանօթ ազգայիններու բնակարանները՝ մայրաքաղաքիս ամէն կողմը:

Հապէշիստանի ազգայինները շնորհակալութեան գիր մը ուղղեր են Ս. Պատրիարքին՝ իրենց նկատմամբ ցոյց տուած հոգածութեանը համար, գոհունակութիւն յայտնելով նաև իրենց հոգեւոր հովիւ Տ. Մկրտիչ քահանայ Ջլղատեանի պաշտօնավարութեանը նկատմամբ:

Արթաքի Խան Նէվրուզ, նախորդ խորհրդական Վիէննայի պարսկական դեսպա-

նատան, մահկանացուն կնքեր է Ռումանիոյ Ռուման քաղաքին մէջ ուր կը բնակէր ժամանակէ մը ի վեր: Հանգուցելոյն կիւր մեծահարուստ Բրունդուլ ընտանիքէն ըլլալով, ընդարձակ հողեր ու կալուածներ ունի այդ կողմերը: Արթաքի Խան ծանօթ դէմք մըն էր Կ. Պոլսոյ մէջ, ուր բաւական տարիներ պաշտօնավարած է իբրև Ս. քարտուղար պարսկական դեսպանատան, Միրզա Մոհսին Խանի դեսպանութեան օրով: Կ. Պոլսէն Վիէննա փոխադրուեցաւ ուր, Նարման Խանի հրաժարելէն ետք, մէկուկէս տարիի չափ դեսպանատան գործակատարի պաշտօն ևս վարեց: Ժամանակէ մը ի վեր քաջուած էր պաշտօնէ, բայց հաւանական կը կարծուէր որ Պուքրէի պարս. դեսպան անուանուեր ի մօտոյ, երբ մահը վրայ հասաւ: Հանգուցեալը Նէվրուզ Յարութիւն ամիրայի թոռն էր, և լեզուագէտ ու համակրելի անձնաւորութիւն մը: Հազիւ յիսուն տարեկան կար:

Վիէննական Միթարեան Հարց Բանկալթի վարժարանին բազմադիւն տեսուչը, Հ. Գաբրիէլ Վրդ. Մէնէվիչեան, կրկնակի հրաժարական տուած ըլլալով այդ պաշտօնէն, Վիէննայի վանական Միաբանութիւնը հարկադրուեր է ընդունիլ հրաժարականը: Հ. Մէնէվիչեանի պաշտօնավարութեան միջոցին, Բանկալթի վարժարանը իր ամէնէն յաջող ու փայլուն տարեշրջանները բոլորեց, և փափագելի էր որ նոյն մակարդակին վրայ պահուէր այդ կրթական հաստատութիւնը իր յաջորդին օրով ալ: Հ. Մէնէվիչեանի հեռացումը ցաւ կը պատճառէ աշակերտներուն, ծնողաց և վարժարանի պաշտօնէութեան, որոնք մօտէն գնահատած էին անոր հմտութիւնը, ձեռնհասութիւնը ու աշխատութիւնները, Հաւանաբար, իր երկասիրած մեծ բառարանին տպագրութեամբը զբաղելու համար Վիէննայի վանքը քաջով ժամանակ մը Հ. Մէնէվիչեան, և այս եղած ըլլայ իր վերջնական հրաժարականին շարժառիթը, ինչպէս անցեալ տարուան արձակուրդի միջոցին ալ ուղեց թողուլ վարժարանին տեսչութիւնը, բայց Վանական վարչութիւնը ստիպեց զինքը որ չարձանուէ:

Հ. Մէնէվիլեանի յաջորդ նշանակումն է, կ'ըսուի, Հ. Գէորգ Վրդ. Բանջիկեան որ մինչև ցարդ իբրև ուսուցիչ կը պաշտօնավարէր նոյն վարժարանին մէջ և որ լեզուագէտ ու կրթական գործէն հասկցող եկեղեցական մըն է: Բանկալթիի վարժարանը պիտի շարունակէ իր արդի կրթական ծրագրին համաձայն ու անխփփա պայմաններով:

Սըվազէն կը գրեն թէ Որբանոցէն այս տարի 12 շրջանաւարտ ելեր են: Ասոնց թիւը մինչև հիմայ կը հասնի 51ի որոնց 2ը բարձրագոյն վարժարաններ մտեր և 8ը ուսուցիչ եղեր են, 10ը վաճառականութեամբ և 20ն ալ արհեստագործութեամբ կը զբաղին: Այս Որբանոցը հաստատուած է 1887ին, մէկ քանի բարեսէլներու կողմէ: Վեհ. Կայսեր կողմէ շնորհուած 300 ոսկի նպաստով՝ սոյն հաստատութիւնը ընդարձակուած է, այնպէս որ, առաջ հազիւ 15 տղայ կրնար պատսպարել, մինչ հիմայ 200 հոգիի հանգիստ տեղ կայ: Պատրիարքարանի նպաստները, որ հետահետէ զեղչուած են, թէև չեն կրնար հաստատութիւնը ապրեցնել, սակայն ինամակալութեան ջանքերով նոր հասոյթներ գտնուելով, Որբանոցը հիմակուան կանոնաւոր վիճակին հասած է:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՎԱՐԱՆ

Ազգ. Կեդրոնական Վարժարանի ինամակալութիւնը կը ծանուցանէ թէ վարժարանին նոր տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 5, Երկուշաբթի օր: Ա. կարգը մշտնել փափաքող աշակերտները կը հրաւիրուին ներկայանալ Ղալաթիոյ ինորհրդարանն ամէն օր, մինչև ժամը 3½, ըստ Թրքաց, արձանագրուելու և ստանալու համար մտից քննութեանց ծրագիրը: Պատ. Ուսումնական ինորհրդոյ կողմէ վկայուած շրջանաւարտներն առանց քննութեան կ'ընդունուին:

Մտից քննութիւնները պիտի կատարուին յառաջիկայ Օգոստոս 30՝ Դշ. և 31՝ Դշ. օրերը, ժամը 1½ին (Բ. Թ.):

Իսկ Կեդրոնական Նախակրթարանի բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստ.

22, Երկուշաբթի օր: Հետեւաբար կը հրաւիրուին թէ՛ հին և թէ՛ նոր գալիք աշակերտները մինչև նոյն օր ամէն առաւօտ ներկայանալ Ղալաթիոյ ինորհրդարանը՝ արձանագրուելու համար: Նոր գալիք աշակերտք պարտաւոր են ի ձեռին ունենալ պատուաստի, ծննդեան և ելած վարժարանին վկայականները:

Ի դիմաց ինամակալութեան

Ասեմադպիւր

Ասեմապիւր

Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Յ. ԷՍԱԵԱՆ

30 Յուլիս 905, Ղալաթիա

Յաջորդ թիւով՝ Գրական ուսումնասիրութիւն մը Տիպիւն ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆԷ և Աբեղաձագն յԱՐՄԱԵ (Կցկսուր Յիւսէպիւր) ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԵՐ-ՄԻՆԱՅԵԱՆԷ:

ՎԻԵՆՆԱԿԱՆ

ՄԻՆԻՍԹԵՐԱՆ ՎԱՐՎԱՐԱՆ

Ի ԲԱՆԿԱԼԹԻ

49րդ տարեգրան

Վարժարանս կը բացուի 2/15 սեպտ. 1905, միեւնոյն ուղղութեամբ և ծրագրով:

Վարժարանս ունի արդի երկրորդական դպրոցներուն (Ecole secondaire moderne, Realschule) ծրագիրը, միջալայրիս պիտոյիցը յարմարցուած:

Լեզուներ. — Հայերէն, Օսմաներէն, Գերմաներէն, Գաղղիերէն, Անգլիերէն:

Գիտութիւններ. — Ուսողական, բնագիտական, բնապատմական, պատմական (կաւանդուին Գաղղ. և Գերման լեզուներով):

Առեւտրական. — Աշխարհագրութիւն, հաշուակալութիւն, թղթակցութիւն (Գաղղիերէն, Գերմ., Անգլ.):

Ուսուցիչք. — Ներքին և արտաքին 22 ուսուցիչ կը դասաւանդեն:

Նորամուտ աշակերտաց ընդունելութիւնը կը սկսի Օգոստ. 17էն, ամէն օր մինչև կէս օր:

Վարչութիւն

Վիեննական Միթարեան Վարժարանի

ՄԱՍԻՍԻ գաւառային բաժանորդներէ ու մանք վերջին ժամանակներս, նամակներ ուղղելով իմըագրութեանս, անցեալ կամ այս տարեշրջանէն իրենց պակաս թիւերը նշանակած և ուղած էին, հաւաքածոնին ամբողջացնելու համար: Կը փութանք ծանուցանել, թէ իրենց խնդրանքին գոհացում տրուեցաւ՝ պակսած թերթերնին շրկուելով ամբողջապէս, և այս առթիւ անգամ մըն ալ կը խնդրենք որ հաճին փութացնել իրենց բաժանորդագրութեանց համեստ գումարին առաքումը:

ՄԻԽԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Քաղկեդոն—Մոսկ

Կը բացուի Սեպտեմբեր 5ին (ըստ Ն. Տ.): Այս հաստատութեան նպատակն է ապահովել աշակերտներուն բարոյական և մտաւորական կրթութիւն մը՝ տոհմային պահանջումներու համաձայն: Առ այս, բաց ի Միաբաններէ՝ ուրոնք վարժարանի վարչական մարմինը կը կազմեն, ունի մայրաքաղաքիս հայ և օտարազգի լաւագոյն ուսուցիչներու գործակցութիւնը, որոնցմով կը կազմուի քսան հոգիէ բաղկացած ուսուցչական խումբ մը:

Կ'աւանդէ հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, լատիներէն և իտալերէն լեզուները, յատուկ վաճառականական դասընթացք և կրթարանական բոլոր ընթացիկ ուսումները, ինչպէս նաև գծագրութիւն, նկար, մարմնամարզ, ձայնական երաժշտութիւն, փողերգութիւն (solfare) ևլն:

Աշակուրջ և հայրական հսկողութիւն մը կը տիրէ աշակերտաց բարոյականի և կրթութեան վրայ: Վարժարանս իր ծովահայեաց և օգնական բարձր դիրքով՝ Պոլսոյ մէջ ամենէն հազուագիւտներէն մէկն է, և օժտուած է առողջապահիկ կարեւոր միջոցներով, որոնց մէջ այս տարի ևս նորութիւններ պիտի ներմուծուին:

Վարժարանիս ընթացաւարտները կրնան ուղղակի մտնել Ներսիսեան Համալսարաններ. և ստուգիւ անոնց յարմարագոյններուն կ'ըլլայ այդ շնորհը՝ Միթրեան վարժարանաց ինամակալութեան կողմէ, անոնց ապագան լիովին ապահովելու համար, ինչ որ

մեծ առաւելութիւն մ'է Պոլսոյ միւս վարժարաններուն վրայ:

Վարժարանիս տարեկան զուտ թոշակն է Գիշերօթիկներուն համար 25 օսմ. լիրա: Աւելի մանրամասնութեանց համար դիմել վարժարանիս Տեսչութեան:

Վերատեսուչ Շ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ
Դատըքէօյ, Մոսկ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐժԱՐԱՆ ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած ինամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կուսուցուին նաև թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օգտէտ շէնքերը, ինչպէս նաև ինամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անատուրի երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին և հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւճարով պէտք է հատուցանել: Դաշնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի, դասառութեան թիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2 ոսկի և ոսկի կը պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13 (Ն. Տ.) չորեքշաբթի իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրը ուղղղներուն ձրի կը շրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպլ Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալպանեանի, ատենապետ ինամակալութեան, Ատաբազար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Skr եւ Sgorken—ՏՌԲԹ. ԵՂԻԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ԳԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւնի նորածել հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճօխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտաւ. կրնեքու եւ այրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՁԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, աֆիօններ եւ այլն.) ճօխ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիշեալ վաճառատունները, ուրկէ անտարակոյս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրէն 5 զեղչ:

3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն ադամանդեայ, գոհարեղէններ երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կռնուին: Իսկ ապառիկ ծախում եւ անվնաս մնացած միմիայն ադամանդեայ, գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կռնուին:

9—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւարիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵՍ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատն ընդ Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կռաւելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրի եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ագարեան խան, Կայմաշ, Դաւաթիա:

9—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Ինքն»-ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ՝ Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջապէս վճարուած, որով Ինքնօճի ապահովագրողը ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսանաւորութիւններէն, որոնց կենթարկուին միշտ արն անձինք, որ ժամաբաժիններու բարգման (accumulati on d'es bënëfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍՏԱԿԱՐ դուրեւամբ գործող ընկերութեանց կ'ապա- հովագրագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ:

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրեք Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց. մէջ

5-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հոգեհի եւ կեանքի (ի վիէննա)

ՊԱՏՈՒԱԼԱՆ ԵՄԵԱԳՍ.Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Ք. ԳՈՒԲՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հեղեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուի լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունն է Ի Կ. Պոլիս, Բաքի Լիօնէ

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրաւսեմեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

5-10

LA CONFIANCE



ԼԱ. ԲՍՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱՆ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ժրանս. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագրութիւն եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՍ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլիս, Հանգրուոյ խան Նո. 53

Դաւանդեալը պատուաւ գործակալներ կը
փնտռուին: 24-50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԷՐԵԱՆ

Փ. Ս. ՍԱՐԱՆ

Պոլիս, Մարբունքը. Պարնաքան խան
Խաճախ Թիւ 26

Ամէն կորգի շաբաթ կը ստանձնէ եւ
խնդրոյ առարկայ եղած գործերու համար
Թէ՛ բերանացի եւ Թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կործիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
շաբաթու եւ տոնաբանական ու ուղարկան
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:

Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգտա-
բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կոր-
ծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
անդհակութիւնները ձգտաբար կուտայ:

Կը լուծարարէ որ մինչեւ օր այս մասին կա-
րելու եղած անդհակութիւնները իրմէ չստաց-
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական վնասուց հասուցման գու-
մարներու եւ փոխարժէքներու գանձումը
եւս կը ստանձնէ: 13-40

ԱՏԱՄԵԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ, ՄԵԾ ՓԱՂԱՅ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսէին դէմ

Գե. Նե. Շք. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Երաւի օրերը ժամադրութեամբ 1-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՊԵ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագրութիւն եւ պահեստի դրամ

[Գ. Ո.] 42]

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահո-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն առաւել անշարժ եւ
շարժուն առարկանք, յոյժ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂՍՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Տարեկ վնաս-
ած է առաւել քան 27,000,000 անգլ.
ափի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւա-
ռաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանֆ Օրօմանի փոյ
Ղալաքիա:

Փախ գործակալը ի Պոլիս

ՌՈՒԲ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Էմրն պիլ խան Ֆնսղիեան խան

Զանիլ բիւզըրու

3-10

Ա. ԷՆՔՍԵՐՃԵԱՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը աւանդալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ.

The Singer Manufacturing Co.

**Ձեռքի, ոտի ու ուրի եւ ձեռքի
միանգամայն մեհեմաներ
կը գտնուին :**

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն ՍԻՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վաճառատանը մէջ:

մեքենան լուսադոյնն է. սոյն մեքենան ամենէն տ-
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝
առկէն ոք Սիցկեի մեքենաները կը գնէ:

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍԻՆՔԱՐՈՒՄԷՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ. 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի. Լիսէին դէմ.

ALL HON

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

●●●●●

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պեյաղլիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՄԿԻԻՏԱՐ

Զարչը Պոյսւ, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

ԿԱՏԱՐԵԱՅ ԵՐԱՇԽԱԼՈՐՈՒԹԻՒՆ:

Մասնանիւղեր գաւառաց բոլոր հաղափներուն մէջ :

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: 77-

7-10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻՃՅԱՆԻ Թ-րդ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գրու-
նուին Տէր-Մինասեան գրառուը եւ մայրա-
քաղաքի միւս հոյ գրավաճառներուն քով.

	հասոյ	դրո.
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեկուրկ	2	15
Փարիզի ամուսնութիւնները	1	2
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին աղան	3	15
Հանրակառքին ոճերը	1	5
Սկզբունք Բազ. Տնտեսութեան	1	4
Ընտանեկան գաղանիքներ	3	15

1-10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան, Առողջու-
թեան ու երկայնակեցութեան: Բր. Ֆ. Պոլ-
լէշըրէ: Թարգմանիչ Անգլիերէնէ, Ս-
մաւել Գ. Հարգապահեան: Կ. Պոլիս,
Տպագրութիւն, 8. Մարտիտեան, 1905.

Հեռագրաբաղաժ, հրապարակ, զբոսալի եւ ամէն շնորհ եւ համարի լոյս պիտանի գրքոյն յը 248 երեսներէ բաղկաւ: Թղթակազմին գինն է 8 դան.: Լաթակազմինը՝ 10 դան.: 10է աւելի գինողներու 15 աւ հարկը եւ 50է աւելի գինողներու 20 աւ հարկը դեղս:

2-5